ԼԴ/0379/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 մարտի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 28-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի օգոստոսի 27-ին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գարիկ Գառնիկի Ղուկասյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով և 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 33105324 (ԼԴ/0379/01/24) քրեական վարույթը:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 2-ին որոշում է կայացրել թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.1. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 11-ին որոշում է կայացրել թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթով հիմնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի փետրվարի 14-ին որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի փետրվարի 28-ին որոշում է կայացրել թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մարտի 4-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների փաստական և իրավական նկարագրությունը.</u>

5. 2024 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ Գարիկ Ղուկասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով և 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա 2024 թվականի մայիս ամսին Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում և տարբեր մարզերում իրականացվող՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հավաքներին մասնակցելու նպատակով մի խումբ անձանց դիտավորությամբ շահագրգռել է:*

Այսպես.

Գարիկ Ղուկասյանը 2024 թվականի ապրիլ ամսին Տավուշի մարզում սկսված և մայիսի 9-ից Երևան քաաղաքում շարունակվող «Տավուշը հանուն հայրենիքի» հավաքներին մասնակցություն ապահովելու նպատակով, ինչպես ինքնությունները

դեռևս չպարզված մի շարք անձանց, այնպես էլ Մերի Կարոյանին նյութապես շահագրգռել է, մասնավորապես՝ վերջինիս 2024 թվականի մայիս ամսվա ընթացքում քննության չպարզված օրը, բջջային հավելվածով ունեցած զանգի միջոցով խոստացել է օժանդակել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում աշխատանքի ընդունվելու հարցում, իսկ ինքնությունները չպարզված մի շարք այլ անձանց տրամադրել է տարբեր չափերի գումարներ:

(…)

Բացի այդ, Գարիկ Ղուկասյանը, տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործելով՝ «168.am» լրատվական կայքին 2024 թվականի մայիսի 21-ին տրված հարցազրույցում փաստացի գիտակցելով, որ իր խոսքը լրատվական կայքի հեռարձակմամբ անմիջապես հասանելի է դառնում հանրության լայն շրջանակի առջև, հասարակության նկատմամբ անհարգալից, բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, նույն հարցազրույցում հնչեցրել է անպարկեշտ արտահայտություններ՝ հայտնելով հետևյալը. «մի խոսքով նման մարդկանց ասում եմ՝ անբարոյականի զավակներ, հազար անգամ ներողություն, ոչ միայն թքեմ Ձեր երեսին, այլ նաև թափեմ Ձեր պոռոշներին, հուսանք հասկացաք (…)»[1]:

6. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն քրեական գործով քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից պարզ չի եղել, թե մեղադրյալին վերագրվող արարքները որտեղ են ենթադրաբար կատարվել, ուստի Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը գտնվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, շարունակել է գործի քննությունը:*

2025 թվականի փետրվարի 14-ին մեղադրյալ Գարիկ Գառնիկի Ղուկասյանի հարցաքննության ընթացքում մեղադրյալը հայտնեց, որ իրեն վերագրվող

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 28-30:

ենթադրյալ հանցանքներից վերջինը կատարվել է Երևան քաղաքում գտնվող «Մնի Պլազա» հյուրանոցային համալիրի տարածքում:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ հիմնական դատալսումների ընթացքում պարզվել է մեղադրյալին վերագրվող հանցավոր արարքներից վերջինի կատարման վայրը, ուստի ի հայտ են եկել այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ տարածքային ընդդատության:

Կողմերից հանրային մեղադրողը առարկեց, որ գործը քննվի Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վարույթը պետք է փոխանցվի ըստ ընդդատության (…)»[2]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Հիշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ տեղեկատվական կամ հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը խուլիգանությունը որակյալ դարձնող հանգամանքներն են: Վերջինի հանրային բարձր վտանգավորությունը դրսևորվում է նրանով, որ հասարակական կարգի դեմ ուղղված ֆիզիկական արարքը փոխակերպվում է թվայինի և թվային միջավայրում հասու դարձվում հասարակության լայն շրջանակի: Այսպիսով՝ ի տարբերություն խուլիգանության մյուս տեսակների, որոնք կատարվում են հասարակական նշանակության, ինչպես նաև հասարակական նշանակություն չունեցող այլ նյութականացված վայրերում, որտեղ առկա է հանրություն, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կատարվող խուլիգանության կատարման վայրը թվային միջավայրն է, որը տարածքային տեղորոշում ողջամտորեն չի կարող ունենալ: Հակառակ մեկնաբանումը կարող է խնդիրներ առաջացնել ՀՀ սահմաններից դուրս գտնվող անձի կողմից տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով խուլիգանություն կատարելու դեպքում, երբ թվային հարթակի շահառուն լինի ՀՀ-ում բնակվող հանրությունը:*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթ 75:

(...) Մեղադրյալ Գարիկ Գառնիկի Ղուկասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքի բովանդակությունից երևում է, որ նրան վերագրված է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, «168.am» լրատվական կայքին 2024 թվականի մայիսի 21-ին տրված հարցազրույցում անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով խուլիգանության կատարում: Վերոգրյալից հետևում է, որ նրան վերագրված արարքը կատարվել է թվային միջավայրում՝ հասանելի դարձվելով հանրության լայն շրջանակին: Հետևաբար այն տարածքային տեղորոշում չի կարող ունենալ, քանի որ քննարկվող հանցակազմի իմաստով արարքի կատարման վայրը թվային միջավայն է, ոչ թե այն տարածքը որտեղ մեղադրյալը հարցազրույց է լրատվական միջոցներին: Հակառակ մեկնաբանման դեպքում գործ կունենանք հանցագործության փորձի հետ, որպիսին մեղադրյալին սույն դեպքում վերագրված չէ:

(...) Վերոգրյալի հետ մեկտեղ՝ գտնում եմ, որ սույն գործով առկա է անձի՝ դատական շրջապտույտի մեջ հայտնվելու, ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման իրական վտանգ: Մասնավորապես.

- գործի նյութերում առկա են բազմաթիվ ակնհայտ տվյալներ (այդ թվում՝ ինքնին հրապարակումների ամբողջական բովանդակությունը, մեղադրյալի կողմից շահագործված հեռախոսահամարը սպասարկած ալեհավաք կայանների տեղադրության վերաբերյալ տեղեկատվությունը և այլն) հարցազրույցը տալու ժամանակ մեղադրյալ Գարիկ Գառնիկի Ղուկասյանի՝ Երևանում գտնվելու վերաբերյալ: Ավելին՝ դեռևս 2024 թվականի սեպտեմբերի 12-ին «168.am» և «24NEWS» լրատվական միջոցներից պահանջել է տեղեկատվություն Գարիկ Ղուկասյանի հարցազրույցի անցկացման վայրի վերաբերյալ՝ միաժամանակ հայտնելով, որ ըստ մեղադրյալի հայտարարության՝ հարցազրույցը տեղի է ունեցել «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում:

- գործի նյութերի համաձայն՝ վարույթի մասնավոր մասնակիցները և բոլոր վկաները բնակվում են Լոռու մարզում: Այսպես՝ մեղադրյալ Գարիկ Գառնիկի Ղուկասյանը բնակվում է Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 17 շենքի թիվ 3 բնակարանում, մեղադրյալի պաշտպան Տիգրան Մկոյանը բնակվում է Վանաձոր

քաղաքի Մյասինկյան փողոցի 6/37 տանը, վկա Մերի Ռուբիկի Կարոյանը բնակվում է Լոռու մարզի Փամբակ համայնքի Դեբեդ գյուղի թիվ 4 փողոցի թիվ 6 տանը, Էդգար Միշայի Բոջուկյանը բնակվում է Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցքի թիվ 10 շենքի թիվ 1 բնակարանում (...)

- Ավելի քան հինգ ամիս իրականացված դատական քննության արդյունքում դատարանի որոշմամբ սահմանված ապացույցների ամբողջ ծավալը Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտվել է: Այսպես՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ նշանակվել են հիմնական դատալսումներ, 2024 թվականի սեպտեմբերի 11-ի դատական նիստի ընթացքում հետազոտվել են գրավոր ապացույցները, 2024 թվականի դեկտեմբերի 6-ի դատական նիստի ընթացքում հարցաքննվել է վկա Էդգար Բոջուկյանը, 2024 թվականի դեկտեմբերի 24-ի դատական նիստի ընթացքում հարցաքննվել է վկա Մերի Կարոյանը, 2025 թվականի փետրվարի 14-ի դատական նիստի ընթացքում հարցաքննվել է մեղադրյալ Գարիկ Ղուկասյանը (...),

- ՀՀ Լոռու մարզի դատախազության դատախազ Միլենա Առուստամյանը 2025 թվականի փետրվարի 14-ի դատական նիստի ընթացքում հայտնեց, որ մեղադրյալի ցուցմունքից պարզ դարձավ, որ նրան վերագրվող վերջին արարքը կատարվել է Երևան քաղաքում, ուստի առարկություններ չունի, որ գործն ըստ ընդդատության ուղարկվի Երևան քաղաքի առաջին ատյանի դատարան: Պատասխանելով դատավորի հարցադրմանը՝ հայտնեց, որ առարկում է, որ գործը քննվի Լոռու մարզի դատարանում,

- մեղադրյալ Գարիկ Ղուկասյանը 2025 թվականի փետրվարի 14-ի դատական նիստի ընթացքում հայտնեց, որ առարկում է, որ գործն ուղարկվի Երևան քաղաք, քանի որ ինքը ամեն օր չի կարող գնալ Երևան և հետ վերադառնալ, ցանկանում է, որ գործի քննությունը շարունակվի Լոռու մարզի դատարանում:

(...) Այսպիսով՝ ավելի քան հինգ ամիս քրեական գործի քննության, դրանով ապացույցների սահմանված ծավալի ամբողջական հետազոտման, վարույթի անհրաժեշտ բոլոր մասնակիցների՝ Լոռու մարզում գտնվելու և մեղադրյալ Գարիկ Ղուկասյանի՝ գործն ընդդատությամբ փոխանցելու դեմ առարկելու դիրքորոշման և դրա փաստարկումների պայմաններում՝ կողմերի համաձայնության հարցը

քննարկելիս Լոռու մարզի դատարանի կողմից վերոգրյալ հանգամանքների պատշաճ չքննարկումը և տվյալ դատարանի կողմից գործի հետագա քննության դեմ պետական մարմնի՝ ի դեմս հանրային մեղադրողի պրոֆեսիոնալիզմի (այդ թվում՝ որպես հանրային գործունեություն իրականացնող անձի՝ բացառապես իրավունքի շահից ելնելով գործելու պարտականության) և ողջամտության սահմաններում անհասկանալի առարկությունն անխուսափելիորեն առաջացրել են անձի՝ դատական շրջապտույտի մեջ հայտնվելու, ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման իրական վտանգ:

Վերջին դիրքորոշման տեսանկյունից կարևորվում է նաև այն, որ մեղադրյալ Գարիկ Ղուկասյանը Լոռու մարզի դատարանին արդեն իսկ հայտնել է, որ առարկում է, որ գործն ուղարկվի Երևան քաղաք, քանի որ ինքը ամեն օր չի կարող գնալ Երևան և հետ վերադառնալ, ցանկանում է, որ գործի քննությունը շարունակվի Լոռու մարզի դատարանում: Նման պայմաններում, եթե անգամ մեղադրյալին վերագրված վերջին արարքի կատարման վայրի իրավական մեկնաբանությունը վերջնարդյունքում դիտարկվի Երևանը, անխուսափելիորեն ծագելու է քրեական գործի ընդդատությունը փոփոխելու հարցի քննարկման անհրաժեշտություն (իսկ դրա հիմքերը և պայմանները սույն դեպքում առերևույթ առկա են): (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 82-87:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

(14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական վարույթի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին: Միևնույն ժամանակ, օրենսդիրն առանձին

կարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ամրագրելով, որ այդ դեպքերում մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խուլիգանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով՝*

(…)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(…)

3) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով (…)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ հիմնական դատալսումների ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Գ.Ղուկասյանն իրեն վերագրվող ենթադրյալ վերջին հանցանքը կատարել է Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ հանրային մեղադրողն առարկել է գործի քննությունը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում շարունակելու դեմ[7], որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, դատական նիստի արձանագրություն, թերթ 74:

ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ արձանագրելով, որ Գ.Ղուկասյանին վերագրվող ենթադրյալ հանցանքի կատարման վայրը ոչ թե այն տարածքն է, որտեղ մեղադրյալը հարցազրույց է տվել լրատվական միջոցներին, այլ թվային միջավայը, որը տարածքային տեղորոշում չունի:

Միաժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ եթե մեղադրյալին վերագրված վերջին հանցանքի կատարման վայր դիտարկվի Երևան քաղաքը, ապա սույն վարույթով ծագելու է քրեական գործի ընդդատությունը փոփոխելու հարցի քննարկման անհրաժեշտություն[9]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ սույն վարույթով վերջին ենթադրյալ հանցանքն ավարտվել է 2024 թվականի մայիսի 21-ին՝ մեղադրյալ Գ.Ղուկասյանի կողմից համապատասխան լրատվական կայքին տրված հարցազրույցում ենթադրաբար հասարակության նկատմամբ անհարգալից, բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով: Համաձայն մեղադրյալի՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հիմնական դատալսումների ընթացքում տված ցուցմունքի՝ վերջինս վերոնշյալ գործողությունները կատարել է Երևան քաղաքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթով վերջին ենթադրյալ հանցանքը կատարվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Անդրադառնալով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությանը, որ եթե անգամ մեղադրյալին վերագրված վերջին հանցանքի կատարման վայր դիտարկվի Երևան քաղաքը, ապա անխուսափելիորեն ծագելու է քրեական վարույթի ընդդատությունը փոփոխելու հարցի քննարկման անհրաժեշտություն, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ այն վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելիս որոշիչ չէ:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գարիկ Գառնիկի Ղուկասյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով և 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ ԼԴ/0379/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ